«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

2023

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷՔՍՊՈ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱԿՏԻՎ ԼՍԵԼԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-26 | ԵՐԵՎԱՆ, ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՅՈՒՐԱՆՈՑ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրն իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտասը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը:

Սույն կատալոգը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այստեղ ներկայացված բովանդակությունը բացառապես հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԾՐԱԳԻՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԴԱՐՁԵԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ԱՄՆ ՄԶԳ ՄԻՋՈՑՈՎ:

ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ.

- համատեղ լուծումներ փնտրել՝ դիմակայելու դժվարություններին, որոնց բախվում են Արցախի ու Հայաստանի երիտասարդները,
- տեղեկանալ «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի մասին, ինչպես նաև տարբեր մակարդակներում երիտասարդների մասնակցության համար առկա ռեսուրսների և հարթակների, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների մասին,
- ծանոթանալ Հայաստանի ու Արցախի տարբեր համայնքներից երիտասարդների հետ,
- փոխանակել ձեր փորձառությունը,
- գտնել համագործակցության նոր եզրեր:

ԵԹԵ ԱՅՈ, ԱՊԱ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-26-ԻՆ ՁԵԶ ՍԻՐՈՎ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ «ԱՆԻ ՊԼԱԶԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ (Սայաթ-Նովա 19), որտեղ կարող եք մասնակցել **«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ 2023Թ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷՔՍՊՈՅԻՆ**:

Մեր նշանաբանն է

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱԿՏԻՎ ԼՍԵԼԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

- նոր նախագծերի առաջարկներ,
- փորձի փոխանակում,
- արժեքների շուրջ մտորումներ,
- միջազգային ծրագրերի մասին տեղեկություն, հանդիպումներ միջազգային գործընկերների հետ,
- Արցախի և ՀՀ երիտասարդների միջև նոր կապեր,
- առկա դժվարություններին դիմակայելու համատեղ լուծումներ:

ԷՔՍՊՈՆ՝ ՀԱՄԱՌՈՏ

Ի՞նչ կարելի է անել էքսպոյում.....
Լավագույն ռիլերի մրցույթի հայտարարություն և ռիլերի ստեղծման հմտությունների մաստեր կլաս.....
Փոփոխությունների թատրոն.....
Ուսանուղի.....
Պանելային քննարկում.....
Ազատ մտքերի տեղ.....
Հարցերի դեպքում.....
Ծրագիր.....
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ.....
Խոսնակներ.....
Անվտանգություն.....
«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիր.....
Երիտասարդների դրական զարգացում.....

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ ԷՔՍՊՈՅՈՒՄ.

- շրջել էքսպոյում ներկայացված կազմակերպությունների տաղավարներով և ծանոթանալ Հայաստանում գործող ակտիվ երիտասարդական հասարակական կազմակերպություններին, երիտասարդական կենտրոններին ու ծրագրերին, գնահատել համատեղ աշխատանքի հնարավորությունները,
- ծանոթանալ, թե ինչպես են հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպություններն արդեն իսկ արձագանքում և պատրաստվում ապագայում ևս արձագանքել արցախահայության խնդիրներին՝ մասնավորապես ներգրավելով արցախցի երիտասարդներին,
- մասնակցել ավելի քան 15 տարվա հարուստ փորձ ունեցող, Հայաստանում առաջատար ինտերակտիվ թատրոնի՝ Փոփոխությունների թատրոնի «Ժողով Ագռավաձորի գյուղապետարանում» ներկայացմանը և անձամբ դառնալ գլխավոր հերոսի խորհրդատուներից մեկը՝ ստեղծագործելով և անձամբ որոշելով ներկայացման ավարտը,
- մասնակցել «Ուսանուղի» աշխատարաններին, որտեղ կարող եք երիտասարդների դրական զարգացման մոտեցմամբ սահմանված կարողություններին վերաբերող գիտելիք և հմտություններ ձեռք բերել հայտնի ու «հայտնիացող» երիտասարդ ու մեծահասակ խոսնակների ու վարողների հետ: Ընտրությունը լայն է՝ 9 աշխատարան նոյեմբերի 25-ին և 26-ին,
- մասնակցել 2 պանելային քննարկումների՝ ինչպես համակարգել երիտասարդական նախաձեռնությունները և որոնք են հանրային հարթակներում երիտասարդների ներգրավվելու առավելությունները և մարտահրավերները,
- ուղղակի հավես ժամանակ անցկացնել երիտասարդների հետ՝ խաղալ, երաժշտություն լսել, միանալ հետաքրքիր խոսակցությունների, սկիզբ դնել համատեղ ծրագրերի,
- սովորել, թե ինչպես կարելի է ազդեցիկ ռիլեր նկարել ու մասնակցել լավագույն ռիլերի մրցույթին՝ մրցանակի ակնկալիքով:

ՌԻԼ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍՏԵՐ ԿԼԱՍ ԵՎ ՌԻԼԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Երիտասարդների հետ աշխատելու համար սոցիալական ցանցերում առաջխաղացումը մեր օրերում ավելի քան պարտադիր է: **YOUTHEXPO2023**-ը փորձելու նաև խթանել երիտասարդական կազմակերպությունների ակտիվությունը սոցիալական ցանցերում:

YOUTHEXPO2023-ի շրջանակներում հայտարարվում է լավագույն ռիլերի մրցույթ, որին կարող են մասնակցել Էքսպոյի մասնակից-կազմակերպությունների թիմերը, ինչու ոչ, նաև էքսպոյի հյուրերը, այցելուները: Ռիլեր ստեղծելու մաստեր-կլասսը տեղի կունենա նոյեմբերի 24-ին 16:30-ից 18:00-ն Անի սրահում, որտեղ դուք կստանաք համապատասխան հմտություններ, և կտեղեկանաք մրցույթում հաղթելու նրբությունների մասին:

Կարճ, դինամիկ և ձեր ողջ էներգետիկան փոխանցող տեսահոլովակներով, դուք կարող եք ներկայացնել ձեր գաղափարները, ձեր մտահղացումները կամ երիտասարդությանը վերաբերող ձեր ուղերձները՝ «երիտասարդ, ակտիվ, լսելի» նշանաբանի ներքո: Լավագույն ռիլերը կտեղադրվեն @youthexpo2023 ինստագրամյան էջում, որոնցից հաղթողները կորոշվեն ռիլի դիտումներով ու լայքերով:

Մենք ունենալու ենք 3 մրցանակ՝ ոսկե հաղթող, արծաթե հաղթող և բրոնզե հաղթող: Հաղթողներին սպասվում են նվերներ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» կոնսորցիումը գլխավորող «Փրոջեքտ Հարմոնի» հայկական մասնաճյուղի կողմից:

ՌԻԼԸ ՊԵՏՔ Է.

- **ներառի «երիտասարդ, ակտիվ, լսելի» նշանաբանը,**
- **բացատրի լայն լսարանին նշանաբանի էությունը,**
- **ներառի կապը ձեր ՀԿ գործունեության հետ,**
- **առաջարկի իրականանալի գաղափարներ,**
- **չգերազանցի 1 րոպեն,**
- **ներառի կադրեր էքսպոյից,**
- **դինամիզմ, դինամիզմ, դինամիզմ,**
- **ոգևորի և ոգեշնչի:**

Էքսպոյի ողջ ընթացքում մեդիա թիմը կլինի ձեր կողքին և կօգնի ռիլի ստեղծման բոլոր փուլերում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Փոփոխությունների թատրոնը, որն ավելի քան 15 տարվա հարուստ փորձ ունի, ինտերակտիվ թատրոնի առաջատարն է Հայաստանում:

Ինտերակտիվ կամ ֆորում թատրոնը հնարավորություն է ընձեռում հանդիսատեսին դառնալ ներկայացման անմիջական մասնակիցը, փոփոխել ներկայացման ընթացքն ու խնդրի լուծման սեփական տարբերակներն առաջարկել: Ներկայացման միջոցով հանդիսատեսները կարողանում են բարձրաձայնել իրենց տեսակետները, ընկալումները և վերաբերմունքը տվյալ խնդրի վերաբերյալ:

«Ժողով Ագռավաձորի գյուղապետարանում» ներկայացումը Ձեզ հնարավորություն կտա ակտիվորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացում երիտասարդների դերի, նրանց ակնկալիքների և ապագայի մասին պլաններ մշակելուն վերաբերող խնդիրների և հնարավորությունների շուրջ քննարկումներին, բանավիճել, քննադատել այս կամ այն կերպարի վարքագիծն ու առաջարկել խնդիրների լուծման սեփական ուղիները:

«ՈՒՍԱՆՈՒԴԻ»

«Ուսանուղու» օրակարգը մշակվել է՝ հիմնվելով բռնի տեղահանված արցախցիների խնդիրների, երիտասարդների դրական զարգացման տիրույթների և հայաստանյան երիտասարդների կարծիքների հիման վրա:

«Ուսանուղին» աշխատարանների շարք է, որտեղ կարող եք ձեռք բերել ճգնաժամային իրողություններին դիմակայելու համար անհրաժեշտ հմտություններ, երիտասարդների դրական զարգացմանը վերաբերող գիտելիք և հմտություններ, ինչպես նաև մասնակցել երիտասարդներին վերաբերող քաղաքականության, ծառայությունների, երիտասարդների մասնակցության խնդիրներին վերաբերող քննարկումներին: Աշխատարանները վարում են և իրենց փորձով, հմտություններով, գիտելիքով ու պատմություններով ձեզ հետ կիսվում են էքսպոյի խոսնակները.

Լանա Կառլովան
Անգելինա Ալեքսանյանը
Սեյրան Սողոյանը
Անի Եղիազարյանը
Աիդա Խաչատրյանը
Հեղինե Նավասարդյանը
Իննա Ղաբուլյանը
Տաթևիկ Հովսեփյանը
Միեր Նաղդալյանը
Սերոբ Խաչատրյանը
Միեր Մանուկյանը
Աննա Լալայանը

ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԹԵՄԱ 1. «Ինչպե՞ս համակարգել երիտասարդական նախաձեռնությունները. ՀԿ գրանցումից մինչև ֆինանսավորում»

Որտե՞ղ են այսօր Արցախի երիտասարդական կառույցների անդամները: Երիտասարդական նախաձեռնությունների և ՀԿ դաշտի ի՞նչ ներուժ ունի արցախահայությունը: Ի՞նչ ուղղություններով և ի՞նչ դերակատարնեով կարելի է արդյունավետորեն ներգարվել արցախյան գործընկերներին: Արդյո՞ք Հայաստանի երիտասարդական նախաձեռնությունների դաշտի հիմնական նպատակային ուղղություններում շտկումների կարիք կա՝ կախված արցախահայության բռնի տեղահանման ներկա իրողության հետ:

ԹԵՄԱ 2. «Ինչո՞ւ ներգրավվել հանրային հարթակներում և ինչպե՞ս ազդել պետական մակարդակում որոշումների կայացման վրա»

Ինչո՞ւ են հանրային մասնակցության հարթակները գրավիչ ոմանց, բայց ոչ մյուսների համար: Որքանո՞վ են դրանք արդյունավետ իրական ազդեցության համար: Ի՞նչպես կարելի է աջակցել երիտասարդին նման հարթակներում ներգրավվելու համար:

Եթե Ձեզ հետաքրքրում են այս և նման այլ հարցեր, հրավիրում ենք մեր պանելային քննարկումներին:

ԱԶԱՏ ՄՏՔԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Սա մի տեղ է, որտեղ էքսպոյի յուրաքանչյուր այցելու և մասնակից, ով ցանկանում է բարձրաձայնել իր գործունեության, ծրագրերի, գաղափարների ու մտքերի մասին, կամ ուղղակի կիսել իր տպավորություններն էքսպոյից, կարող է ներկայացնել դրանք և քննարկել էքսպոյի կազմակերպիչների, մասնակիցների և այցելուների հետ:

ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՂԱՎԱՐՆԵՐ

Այստեղ կարող եք հակիրճ տեղեկատվություն գտել տարբեր մակարդակներում երիտասարդների մասնակցության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների վերաբերյալ և այցելել նրանց տաղավարները՝ ավելի մանրամասն ծանոթանալու նրանց գործունեությանը և քննարկելու համագործակցության հնարավորությունները:

Էքսպոյին մասնակցում են կազմակերպություններ Երևանից և ՀՀ մարզերից:

ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Էքսպոյին վերաբերող ցանկացած հարցով կարող եք դիմել մեր կամավորներին, որոնց կարող եք ճանաչել իրենց սպիտակ շապիկով և նարնջագույն անվանաքարտերով (badge): Նրանք կօգնեն Ձեզ գտնել Ձեր նախընտրելի միջոցառման սրահը, ճշտել ժամը, տեղեկություններ կտրամադրեն տրանսպորտի և էքսպոյին վերաբերող այլ հարցերի վերաբերյալ:

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 1. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24

15:00 - 16:00	**ԷՔՍՊՈՅԻ ԲԱՑՈՒՄ**	«ԱՆԻ» ՍՐԱՀ

Ողջույնի խոսքեր

Լավագույն ռիլերի մրցույթի վերաբերյալ հայտարարություն

16:30 - 18:00	**ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՑ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ**	«ԳԱՌՆԻ» ՍՐԱՀ

Վարող՝
Աշոտ Խուրշուդյան
Մարդկային կարգացման միջազգային կենտրոն

16:30 - 18:00	**ՌԻԼԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՏԵՐ ԿԼԱՍ**	«ԱՆԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

Վարող՝
Աննա Լալայան
Մարքեթինգի մասնագետ

18:00	**ՕՐՎԱ ՓԱԿՈՒՄ**	«ԱՆԻ» ՍՐԱՀ

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 2. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25

11:00	ՕՐՎԱ ԲԱՑՈՒՄ	«ԱՆԻ» ՍՐԱՀ
12:00 - 13:00	ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ. «ԺՈՂՈՎ ԱԳՌԱՎԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ»	«ԱՆԻ» ՆԱԽԱՍՐԱՀ

Փոփոխությունների թատրոն

«ՈՒՍԱՆՈՒՂԻ» ԱՇԽԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՐՔ

14:00 - 15:30	ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԱՄՆ-ՈՒՄ՝ ԵՐԱՁԱՆՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.	«ԳԱՌՆԻ» ՍՐԱՀ

Ինչ հնարավորություններ է առաջարկում Ամերիկյան Խորհուրդները և EducationUSA-ը երիտասարդների համար
Ինանա Ղաբուլյան
EducationUSA

Ամերիկյան անկյուններ
Տաթևիկ Հովսեփյան
ԱՄՆ դեսպանատուն

14:00 - 15:00	ՄՏՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ. ԻՆՉՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ	«ԴՎԻՆ» ՍՐԱՀ

Աիդա Խաչատրյան և Հեղինե Նավասարդյան
Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողներ

14:00 - 15:00	ՄԵԴԻԱ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	«ԱՆԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

Անի Եղիազարյան
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 2. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25

16:00 - 17:00	**ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՊՐԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ**	«ԳԱՌՆԻ» ՍՐԱՀ

Սեյրան Սողոյան
Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող

16:00 - 17:30	**ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏ. ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ ՀՈՒՅԶԵՐԸ ԵՎ ՉՎԱԽԵՆԱԼ ԴՐԱՆՑԻՑ**	«ԱՆԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

Միեր Նաղդալյան
ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն

16:00 - 17:30	**ԻՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ**	«ԱՆԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

ՊԱՆԵԼԱԼԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Ինչպես ներգրավել Արցախի երիտասարդական կազմակերպություններին.համագործակցություն հայաստանյան և արցախյան ՀԿ-ների միջև, թե՞ արցախցի ակտիվ երիտասարդների ներգավում հայաստանյան ՀԿ-ներում»

Մասնակիցներ՝

Գրիգոր Երիցյան
Հայ առաջադեմ երիտասարդներ

Տաթևիկ Կարապետյան
Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա

Աննա Ալեքսանյան
ՎԻՆՆԵԹ Գորիս կարգացման հիմնադրամ

Իզաբելլա Սարգսյան
Երիտասարդ մարդկանց քրիստոնյա ընկերակցության (YMCA) Արցախի մասնաճյուղ

17:30 - 18:00	**ՕՐՎԱ ՓԱԿՈՒՄ**	«ԱՆԻ» ՍՐԱՀ

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 3. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26

16:00 - 17:30 | **«ԻՆՉՈ՞Ի ՆԵՐԳՐԱՎՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԱԶԴԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՎՐԱ»** | **«ԱՆԻ» ՍՐԱՀ**

ՊԱՆԵԼԱԼԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մասնակիցներ՝

Գեղամ Հայրապետյան
ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհուրդ

Ավետ Հովհաննիսյան
ՄԻՊ-ին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ

Մարիամ Տոնոյան
ՄԻՊ-ին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ

Սամվել Կարապետյան
ՄԻՊ-ին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով

Վարող՝
Արմեն Բեժանյան
«Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղ

«ՈՒՍԱՆՈՒՂԻ» ԱՇԽԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՐՔ

14:00 - 15:30 | **ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԷՐԱՍՄՈՒՍ+ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ** | **«ԳԱՌՆԻ» ՍՐԱՀ**

Լանա Կարլովա
Հայաստանում Էրասմուս+ ազգային գրասենյակ

ԾՐԱԳԻՐ

ՕՐ 3. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26

16:00 - 15:00	ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻ	«ԴՎԻՆ» ՍՐԱՀ

Անգելինա Ալեքսանյան
Ընտանեկան խորհրդատվության կենտրոն

16:00 - 17:00	ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	«ԳԱՌՆԻ» ՍՐԱՀ

Սերոբ Խաչատրյան
Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)

16:00 - 17:00	ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՐԳԱԼԻՑ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	«ԴՎԻՆ» ՍՐԱՀ

Միեր Մանուկյան
«Լավ էլի» ռոք խումբ

17:30	ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌԻԼԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԷՔՍՊՈՅԻ ՓԱԿՈՒՄ	«ԱՆԻ» ՍՐԱՀ

ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՅՈՒՐԱՆՈՑ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակառուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաքելությունն է խթանել լավ կառավարման և ժողովրդավարական գործընթացները՝ հանուն պետականության ամրապնդման և կոռուպցիայից զերծ Հայաստանի:

2019 թվականի ապրիլից ԹԻՀԿ-ը կազմակերպում է հակակոռուպցիոն դպրոցներ, որոնք ուղղված են երիտասարդների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքների տարածմանը:

Հակակոռուպցիոն դպրոցների ընթացքում մասնակիցները ստանում են համապարփակ տեղեկատվություն կոռուպցիայի տեսակների և դրանց չափման միավորների, տնտեսության վրա կոռուպցիայի ազդեցության և շատ այլ կարևոր թեմաների վերաբերյալ: Ոլորտային գիտելիքներից զատ դպրոցը նաև հնարավորություն է տալիս մասնակիցներին զարգացնել այնպիս կարևոր հմտություններ, ինչպիսիք են քննադատական և վերլուծական մտածողությունը, առաջնորդության զարգացումը: Ծրագրի ավարտին մասնակիցներին հնարավորություն է տրվում գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները՝ մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն փոքրիկ նախագծեր:

ԹԻՀԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ ՆՊԱՍՏԵԼ.

- կոռուպցիայի կանխարգելմանը,
- կառավարման գործընթացների թափանցիկությանը,
- իրավունքի գերակայությանը,
- արդարադատության հաստատմանը,
- մարդու իրավունքների պաշտպանությանը,
- հանրային ռեսուրսների պաշտպանությանը,
- հանրային գույքի ու ֆինանսների պատասխանատու կառավարմանը,
- քաղաքականության մեջ օրինավորության խթանմանը,
- քաղաքացիական առաջնորդության խթանմանը,
- հանրության ներգրավման հնարավորությունները ստեղծմանը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

TRANSPARENCY INTERNATIONAL ANTICORRUPTION CENTER
info@transparency.am
+374 10 56 95 89

ՆՈՐ ԼՈՒՅՍ ՄԵՆԹՈՐԻՆԳ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Mentoring Center for Youth NGO

«Նոր լույս» ՀԿ-ն դեռահաս աղջիկներին հնարավորություն է տալիս մասնակցելու 3 փուլից կազմված ծրագրի, որը բաղկացած է.

- մենթորինգից,
- հմտությունների զարգացումից,
- բարձրագույն կրթությունից:

Յուրաքանչյուր փուլ տևում է 11 ամիս: Դեռահաս աղջիկները, 3 տարի շարունակ մասնակցելով «Նոր լույսի» ծրագրին, հնարավորություն ունեն դիմելու կառույցին բարձրագույն կրթության կրթաթոշակ ստանալու նպատակով:

Նորլույսականները գործում են «ավելի պայծառ ապագա» տեսլականի ներքո:

ՆՈՐ ԼՈՒՅՍԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՁՈՐԱԿՑԵԼՈՎ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ, ԿՍՏԵՂԾԵՆՔ ՀԶՈՐ, ԽԵԼԱՑԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔ, ՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ Է:

«Նոր լույս» ՀԿ-ն առաջարկում է.

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻՆ.

- անհատական և խմբային մենթորինգ հանդիպումներ,
- փափուկ հմտություններ,
- մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն,
- հայտնի և կյանքում էական հաջողություններ գրանցած անհատների հետ հանդիպումներ, հնարավոր համագործակցություն,
- բուլինգի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական-բացատրական հանդիպումներ,
- կրթաթոշակներ:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻՆ, ՍՈՑԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ.

- բուլինգի կանխարգելմանն ուղղված իրազեկող հանդիպումներ,
- բուլինգի կանխարգելման տեսագործնական աշխատագրքույկի տրամադրում և վերապատրաստում,
- մենթորինգ վերապատրաստում,
- հոգեբանական գիտելիքներ, հմտություններ ու գործիքներ:

nluyce@gmail.com
shogher85@gmail.com
+374 33 47 81 47
+374 93 47 81 47

NOR LUYCE MENTORING CENTER FOR YOUTH

ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

YCCD
YOUTH COOPERATION CENTER OF DILIJAN

ԴԵՀԿ-ն առաջարկում է.

ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐ (ՏԵՂԱԿԱՆ/ՄԻՋԱԶԳԱՅԻՆ)

- ռազմավարության մշակում,
- ֆոնդահայթայթում,
- ծրագրի կառուցվածքի նախագծում,
- ծրագրի կառավարում,
- արդյունավետ հաղորդակցություն,
- առաջնորդություն,
- դրամաշնորհների կառավարում,
- երիտասարդների կարիերայի զարգացում,
- երիտասարդական առաջնորդություն,
- կամավորություն և քաղաքացիական նախաձեռնություն,
- սոցիալական ձեռներեցություն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- հայ կամավորների գործուղում Եվրոպա,
- եվրոպացի կամավորների հյուրընկալում,
- միջազգային թրեյնինգների անցկացում,
- փոխանակման ծրագրերի կազմակերպում:

ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

- անգլերենի դասընթացներ սկսնակների համար,
- խոսակցական անգլերենի դասընթացներ,
- կարուձևի գործնական պարապմունքներ,
- Եվրոպական ակումբներ:

ՄԵՐ ՁԱՆՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՎ՝ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԻՋԱՎԱՅՐ, ՈՐՏԵՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲԱՐԳԱՎԱՃԵԼ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԴԵՐ ԽԱՂԱԼ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպությունը միտված է համայնքի զարգացմանը՝ երիտասարդ կանանց և տղամարդկանց հզորացման միջոցով: Առաջնորդվելով արդարության, թափանցիկության, նվիրվածության և պատասխանատվության արժեքներով՝ կազմակերպությունը հավատարիմ է անհատների և համայնքի կյանքում դրական փոփոխությունների առաջխաղացմանը: Կենտրոնի ռազմավարական ուղղություններն են սոցիալական ձեռներեցությունը, նորարարական լուծումների օգտագործումը հասարակության մարտահրավերներին դիմակայելու համար, երիտասարդական աշխատանքը:

ԴԵՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

YOUTH COOPERATION CENTER OF DILIJAN
info@yccd.am
+374 60 65 15 00
+374 77 77 25 05

Armenian Progressive Youth

ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

«Հայ առաջադեմ երիտասարդությունը» ակտիվ երիտասարդական հասարակական կազմակերպություն է: Այն հիմնադրվել է 2009 թվականին՝ նպատակ ունենալով խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում և աջակցել երիտասարդներին՝ զարգացնելու իրենց առաջնորդական հմտությունները:

Կազմակերպության առաքելությունն է նպաստել Հայաստանում այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ առաջադեմ, կիրթ, մրցունակ, լայն մտահորիզոն ունեցող երիտասարդները դրական փոփոխությունների շարժիչ ուժն են:

ՀԱԵ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

«Հայ առաջադեմ երիտասարդությունը» ձգտում է մի իրականության, որտեղ երիտասարդները լիարժեք մասնակցում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքին և ազդում են որոշումների կայացման վրա:

«ԱԼՏԵՐՆԱՏԻՎ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ կողմից 2022 թվականին Երևանում հիմնադրվել է «Ալտերնատիվ» երիտասարդական կենտրոնը, որն իր տեսակի մեջ առաջինն է մայրաքաղաքում: Կենտրոնը ներառական միջավայր է 15-ից 30 տարեկան երիտասարդների համար:

Այն երիտասարդներին, երիտասարդական կազմակերպություններին, խմբերին և նախաձեռնություններին անվճար տրամադրում է կահավորված և տեխնիկապես հագեցած տարածք՝ հանդիպելու, սովորելու, ներգրավվելու և պարզապես ժամանցի համար:

«Ալտերնատիվ»-ը երիտասարդների գաղափարների քննարկման, պլանավորման և իրականացման վայր է:

Կենտրոնը բաց է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 18:00-ը:

apy@apy.am

+374 10 58 33 99

ԵՐԱԶԱՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

«Երազանքի երիտասարդություն» հասարակական կազմակերպությունն իր ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով նպատակ ունի բարձրացնել իրազեկվածությունը մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ, խթանել հարգանքի և հանդուրժողականության մշակույթը:

ՀԿ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է.

- ռոբոտաշինության անվճար դասընթացներ,
- շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրազեկման և մաքրման աշխատանքներ,
- փորձի փոխանակման միջոցով առցանց սեմինարներ այլ երկրների ներկայացուցիչների հետ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և խելացի քաղաքների վերաբերյալ:

ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.

- անգլերեն լեզու,
- կանանց և աղջիկների աշխատանքային իրավունքները,
- ժողովրդավարություն և քաղաքացիական իրավունքներ,
- տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում և արդի հիմնախնդիրները,
- ապահով համացանց:

ՀԶՈՐԱՑՆԵԼՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ՝ ՄԵՆՔ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐՏԵՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՐԻՔԻՑ ՄԱՐԴԻԿ ՍՐՏԱՑԱՎ ԿԼԻՆԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ՝ ԻՐԵՆՑ ԴԵՐԸ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

«Երազանքի երիտասարդություն» սոցիալ-երիտասարդական ՀԿ տեսլականն է ստեղծել հասարակություն, որտեղ յուրաքանչյուր երիտասարդ հնարավորություն ունի ստանալ գիտելիք, հմտություններ և մոտիվացիա, որպեսզի իր ներդրումն ունենա իր համայնքում: Իր հերթին «Երազանքի երիտասարդությունը» պատրաստ է օժանդակել բոլորին՝ բացահայտելու այդ պոտենցիալը:

Կազմակերպության գործունեությունը միտված է երիտասարդների կարողությունների հզորացմանը, երիտասարդության շրջանում մարդու իրավունքների և ժողովրդավարության խթանմանը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

DREAM YOUTH

dreamyouthngo@gmail.com | +374 77 93 55 97

ՀՈՒՅՍԻ ՄԵԾԱՄՈՐ

«Հույսի Մեծամոր» հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպության առաքելությունն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների իրավունքները, նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում և ընտանիքում ապրելու իրավունքը, նրանց սոցիալական ներառումը հասարակություն,
- ապահովել ներառման սկզբունքով ծառայությունների մատուցում ցերեկային կենտրոնում,
- կանխարգելել հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը և մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ,
- նպաստել շահառուների կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը,
- ուսուցանել նրանց կարողություններին համարժեք գիտելիքներ,
- զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողություններ,
- փոխել վերաբերմունքը հաշմանդամների խնդիրների և շրջապատում նրանց դերի նկատմամբ:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՒՅՆՆ ԵՆ, ՄԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

ԾՐԱԳՐԵՐ

«Ցերեկային խնամքի կենտրոն հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների համար Մեծամոր համայնքում» ծրագիրն իրականացվում է ԵՄ, ԱՀՀ ֆինանսավորմամբ իրականացվող «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի շրջանակում:

«Սոցիալ-հոգեբանական ծառայություններ Մեծամորում» ծրագիրն իրականացվում է «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

huysimetsamor@yahoo.com | +374 77 90 11 88

HUYSI METSAMOR FOR PROBLEMS OF THE DISABLED

ԼՅՈՒՊԻՆ

LYUPIN
YOUTH NGO

ԼՅՈՒՊԻՆ երիտասարդական հասարակական կազմակերպության առաքելությունն է երիտասարդների անհատական հզորացումը՝ նրանց կարողությունների զարգացման ճանապարհով:

ՀԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- խթանել երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական հասարակության ձևավորման և տեղական ինքնակառավարման գործընթացներում,
- երիտասարդների մեջ զարգացնել նախաձեռնողականության, առաջնորդության և սոցիալական ձեռներեցության հմտություններ,
- աջակցել երիտասարդներին՝ մասնակցելու տեղական և միջազգային երիտասարդական փորձի փոխանակումների, միջմշակութային միջոցառումների, կարողությունների զարգացման և իրազեկման դասընթացների, համաժողովների, փառատոնների,
- նպաստել տարածաշրջանում կամավորության մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը,
- խթանել երիտասարդ կանանց շրջանում զբաղվածության և ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր միջավայրի ստեղծումը և այլն:

ՀԿ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՉԷ ԸՆՏՐՎԱԾ: ԼՅՈՒՊԻՆՆԵՐԸ ԾԱՂԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ:

Ներկայում կազմակերպությունում գործում է ԻՄՓԱՔԹ ակումբը, որը բազմաթիվ երիտասարդների հնարավորություն է տալիս ինքնաբացահայտելու սեփական անձը, սովորելու և զարգացնելու նոր հմտություններ ու ներգավվելու համայնքային ուսումնական ծրագրերում:

ԼՅՈՒՊԻՆ-ը հարթակ է երիտասարդների համար՝ դրսևորելու իրենց երևակայությունն ու ստեղծարարությունն ամենատարբեր գույներով: Նպաստելով երիտասարդների անհատական կարողությունների զարգացմանը՝ կազմակերպությունը նոր հնարավորություններ է առաջարկում նրանց շարունակական կատարելագործման համար:

ԼՅՈՒՊԻՆԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

lyupin.yngo@gmail.com
+374 77 16 22 70

EDUCATIONUSA ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱՄՆ պետքարտուղարության կողմից հովանավորվող Education USA հայաստանյան գրասենյակը պատկանում է աշխարհում գոյություն ունեցող նմանօրինակ հարյուրավոր խորհրդատվական կենտրոնների ցանցին:

Կենտրոնը դիմորդներին և ուսանողներին տրամադրում է ճշգրիտ, բազմակողմանի և արդի տեղեկատվություն՝ ԱՄՆ-ում քոլեջներ և համալսարաններ ընդունվելու գործընթացի վերաբերյալ:

Կենտրոնի բոլոր ծառայությունները տրամադրվում են անվճար:

ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- դասախոսություններ, վեբինարներ,
- անհատական խորհրդատվություններ, խմբային խորհրդատվություններ,
- ամերիկյան կրթական համակարգի մասին հանդիպումներ,
- EducationUSA գրադարան:

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.

- EducationUSA կրթական ցուցահանդեսներ. ԱՄՆ բուհերի պաշտոնական ներկայացուցիչներին, շրջանավարտներին և ուսանողներին հանդիպելու հնարավորություն,
- մինչմեկնման կողմնորոշիչ հանդիպումներ,
- երկխոսություն միջազգային կրթության և բանակի միջև. հանդիպում պատկան մարմինների հետ՝ միջազգային կրթությամբ տարկետման հնարավորությունների մասին:

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԾՐԱԳՐԵՐԸ.

- Մրցունակ ուսանողների ակումբ (CCC). Մեկ տարվա ինտենսիվ խմբային խորհրդատվական ծրագիր, որն աջակցում է ԱՄՆ բուհեր դիմել ցանկացող ուսանողներին,
- Մարզային աշակերտների մրցունակ ակումբ (PRE-CCC). 9-րդ և 10-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված առցանց ծրագիր՝ կրթական և փոխանակման ծրագրերին նախապատրաստելու համար:

Yerevan@educationusa.org | +374 10 54 40 12

EDUCATIONUSA ARMENIA

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, լինելով Կարմիր խաչի միջազգային շարժման լիիրավ անդամ, առաջնորդվում է Կարմիր խաչի հիմնարար սկզբունքներով և հանդիսանում է կառավարությանն աջակցող կազմակերպություն մարդասիրական ոլորտում:

ՀԿԽԸ-ի առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

Ընկերությունը բաց կազմակերպություն է, որին կարող են անդամագրվել բոլոր ֆիզիկական անձինք՝ անկախ ռասսայից, սեռից, դավանանքից և այլն:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը իրականացնում է երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ խրախուսելով երիտասարդների մասնակցությունն ու ներգրավվածությունը իրենց համայնքային գործընթացներում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ՝ ԱՆԿԱԽ ԱԶԳՈՒԹՅՈՒՆԻՑ, ՌԱՍՍԱՅԱԿԱՆ, ՍԵՌԱՅԻՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻՑ:

ԾՐԱԳՐԵՐ.

- երիտասարդ առաջնորդների ակադեմիա,
- մարդասիրական մրցանակ,
- կյանքի հմտություններ,
- առողջ ապրելակերպ,
- կլիմայի փոփոխություն,
- երիտասարդների հոգեկան առողջություն,
- երիտասարդական փորձի փոխանակման ծրագրեր:

Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր Խաչի Ընկերության (ՀԿԽԸ) շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ARMENIAN RED CROSS SOCIETY

redcross@redcross.am

+374 60 62 50 50

ՀԵՀԵՄ

Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորումը (ՀԵՀԵՄ) գործում է Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո: Կառույցը որդեգրել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր թեմերի երիտասարդներին Մայր Եկեղեցու շուրջ համախմբելու, երիտասարդ հայորդիներին քրիստոնեական և հայեցի ոգով դաստիարակելու առաքելությունը: Կենտրոնի ծրագրային հիմնական ուղղություններն են՝ հոգևոր-ազգային, կրթա-դաստիարակչական, լուսավորչական, կարողությունների զարգացման, հետազոտական:

ՀԵՀԵՄ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՀԵՀԵՄ-Ի ԱՆԴԱՄ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄԻ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ 15-35 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ:

ՀԵՀԵՄ-Ն ԱՇԽԱՏՈՒՄ Է.

- նպաստել քրիստոնեական հավատքի և արժեքների տարածմանը երիտասարդության շրջանում,
- աջակցել թեմական երիտասարդական միավորների ստեղծմանն ու ամրապնդմանը, աջակցել թեմական երիտասարդական խորհուրդների, եկեղեցասեր երիտասարդական կառույցների համագործակցությանը՝ իրականացնելով համատեղ ծրագրեր Հայաստանում, Արցախում և Սփյուռքում,
- մշակել և հանդես գալ արդյունավետ ծրագրերով, որոնք միտված կլինեն հոգևոր-ազգային շահի ապահովմանը՝ հաշվի առնելով տարածաշրջանի և երկրի առանձնահատկությունները,
- ստեղծել քրիստոնեական երիտասարդական աշխատանքի վերաբերյալ մեթոդաբանական և կրթական նյութեր ու ծրագրեր՝ նպաստելով երիտասարդական աշխատանքի ճանաչելիությանը ՀԵՀԵՄ թեմական կառույցներում,
- ստեղծել քրիստոնեական երիտասարդական աշխատանքի կրթական ծրագրեր և պատրաստել երիտասարդական աշխատանքի մասնագետներ Հայաստանի և Սփյուռքի ՀԵՀԵՄ կառույցների համար,
- կատարել թեմական երիտասարդների կարիքների գնահատում և չափել առկա ծրագրերի արդյունավետությունը՝ նպաստելով քրիստոնյա երիտասարդի լավագույն շահի պաշտպանությանը:

info@hehem.am

+374 43 71 17 00

ARMENIAN CHURCH YOUTH ORGANIZATION

ԱՊԱԳԱՆ ՄԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Future in Our Hands
Youth NGO

«Ապագան մեր ձեռքերում» երիտասարդական հասարակական կազմակերպության հիմնական նպատակն է ծավալել հանրօգուտ գործունեություն: Կազմակերպության անդամները գերազանցապես երիտասարդներ են (ուսանողներ, ավագ դպրոցի աշակերտներ, և այլն), ինչպես նաև երիտասարդների և երեխաների հետ աշխատող մասնագետներ, ուսուցիչներ:

ՀԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- մասսայականացնել ժամանակակից մշակույթն ու այն աշխարհում խաղաղ գործընթացի ստեղծման, փոխըմբռնման և համագործակցության հիմնական հիմք դարձնել,
- աջակցել երիտասարդության մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանն ուղղված նախաձեռնություններին,
- աջակցել երիտասարդների սոցիալական խնդիրների լուծմանը,
- մասնակցել ազգային և միջազգային երիտասարդական ծրագրերի մշակմանը և իրականացմանը,
- խթանել երիտասարդության փոխըմբռման զարգացումը,
- նպաստել ՀՀ-ում երիտասարդության մասնակցության ակտիվացմանը:

ԱՊԱԳԱՆ ՄԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐ ԳՈՐԾԵՐՈՎ՝ ՆՊԱՍՏԵԼՈՎ ԳԻՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ՀԿ-ում երիտասարդները համախմբված են կրթության, մշակութային, ազգային և եվրոպական արժեքների իրազեկման խթանման, մարդկանց օժանդակման, սահմանափակ հնարավորություններով երիտասարդների ինտեգրման գաղափարների շուրջ:

ԾՐԱԳՐԵՐ.

- Կարճաժամկետ և երկարաժամկետ կամավորական ծրագրեր (ESC),
- Erasmus+ երիտասարդական փոխանակման ծրագրեր, սեմինարներ, ուսումնական այցեր պրակտիկայի հնարավորություն,
- թեմատիկ դասընթացներ:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

FUTURE IN OUR HANDS YOUTH
infofuture11@gmail.com
+374 99 33 78 73

ԵՂՎԱՐԴ

«Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական հասարակական կազմակերպության տեսլականն է.

- համախմբել երիտասարդներին՝ բարձրացնելով նրանց դերն ու մասնակցությունը բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում,
- ընդլայնել և զարգացնել երիտասարդական շարժումը,
- բարձրացնել իրազեկության մակարդակը շրջակա միջավայրի խնդիրների, ժողովրդավարության, սոցիալական իրավունքների, երիտասարդների մասնակցության վերաբերյալ, հզորացնել երիտասարդների ներուժը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ՝ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԻՑ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ:

Կարևորելով տեղական ինքնակառավարման և ժողովրդավարության դերն ու նշանակությունը համայնքային մակարդակում՝ կազմակերպությունն իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են խթանելու ժողովրդավարության կայացումը, ՀՀ համայնքներում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության իրավունքի իրացումն ու մասնակցության հնարավորությունների միջավայրի ձևավորումը:

Գործունեության վերջին երկու տարիներին իրականացվել են տեղական և միջազգային մի շարք ծրագրեր՝ ուղղված.

- էներգաարդյունավետությանն ու սոցիալական ներգրավվածությանը,
- ճգնաժամային/արտակարգ իրավիճակների կառավարմանը,
- հասարակության վարքագծի փոփոխությանը,
- համավարակի հետևանքների հաղթահարմանը,
- սոցիալական աջակցության տրամադրմանը,
- կլիմայի փոփոխությանը:

Ներկայում ՀԿ-ն իրականացնում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus+ երիտասարդական տեղական և միջազգային ծրագրեր:

yeghvardhk@gmail.com
+374 94 22 10 61

YEGHVARD YOUTH ECOLOGICAL

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ առաքելությունն է նպաստել համայնքների զարգացման գործում բնակչության մասնակցային վարքի ձևավորմանը և այդ միջոցով համայնքների տնտեսական, սոցիալական, մշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:

Կազմակերպությունը գործունեություն է իրականացնում սոցիալական, առողջապահության, բնապահպանության և համայնքային զարգացման ոլորտներում՝ կարևորելով բնակչության անմիջական ներգրավվածությունը տարբեր խնդիրների լուծման գործընթացում:

ՀԿ-Ի ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- խոցելի խմբերի հետ աշխատանք,
- հումանիտար աջակցություն արտակարգ իրավիճակներում,
- մեծահասակների կրթություն,
- քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացում,
- մարդու իրավունքներ և ժողովրդավարություն,
- մեդիագրագիտություն և երիտասարդության ակտիվացում,
- կոռուպցիայի դեմ պայքար և շահերի բախում,
- պայքար խտրականության դեմ:

ՏԱՐԵԿԱՆ 200-300 ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՓՈՐՁԵԼՈՎ ՆՊԱՍՏԵԼ ԱՊԱՀՈՎ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ:

ՀԿ-Ի ՋԱՆՔԵՐՈՎ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ.

- Բռնության ենթարկված կանանց աջակցման կենտրոնը,
- «Կրթապնակ» մեծահասակների կրթության կենտրոնը,
- Մարտունի ԻնֆոՏունը,
- «Թագանի» սոցիալական ձեռնարկությունը,
- «Ռադիո Մարտունի» առցանց ռադիոն,
- Մարտունի երիտասարդական բանկը,
- Համայնքային ռեսուրս կենտրոնը:

Խորհրդի ջանքերով Գեղարքունիքի մարզում վերակառուցվել են բուժկետեր, կառուցվել նախակրթարաններ, հիմնվել է սոցիալական ձեռնարկություն, որտեղ աշխատում են բացառապես հաշմանդամություն ունեցող անձինք:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

MARTUNI WOMEN'S COMMUNITY COUNCIL

kananc7@gmail.com

+374 94 21 13 96

ՀԿ ԿԵՆՏՐՈՆ

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի առաքելությունն է սատարել քաղաքացու մասնակցությունը երկրի զարգացման գործընթացներում՝ կարողությունների համալիր և շարունակական ընդլայնման միջոցով: Ներկայում կազմակերպությունն իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են երիտասարդությանը:

Կազմակերպությունն Ախուրյան բազմաբնակավայր համայնքում իրականացնում է «CapSLoc» ծրագիրը, որի շրջանակներում ակտիվ աշխատում է նաև համայնքի երիտասարդների հետ:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԱՆՀԱՏԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ՀԻՄՔՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-Ի ՏԵՍԼԱԿԱՆԻ ՈԳԻՆ ՈՒ ՇՈՒՆՉՆ ԵՆ:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՏՎԱԾ Է.

- խթանելու քաղաքացու և քաղաքացիական հասարակության կառույցների/խմբերի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում,
- աջակցելու սոցիալական գործընկերության հաստատմանը,
- խթանելու քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացները,
- աջակցելու քաղաքացու և քաղաքացիական հասարակության կառույցների/խմբերի կարողությունների զարգացմանը:

Կազմակերպությունը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գենդերային հավասարության պորտֆելի հետ համագործակցությամբ վերջերս ստեղծել է «ՏԻՄխաղա.հայ» առցանց խաղը, որի նպատակն է զարգացնել քաղաքացիների՝ հատկապես երիտասարդների գիտելիքները տեղական ինքնակառավարման վերաբերյալ:

Կազմակերպությունը տարիներ առաջ ստեղծել է նաև «ՏԻՄագետ» սեղանի խաղը, որը նպատակ ունի երիտասարդներին փոխանցել գիտելիքներ տեղական ինքնակառավարման և մունիցիպալ իրավունքի վերաբերյալ:

info@ngoc.am
+374 91 74 33 15

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԳԱՐԴ

«Երիտասարդական ավանգարդ» ՀԿ-ն գործում է հօգուտ տեղական ինքնակառավարման բարեփոխման, առողջապահական և կրթական հիմնարկների աշխատանքի հանրային վերահսկողության, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կանանց իրավունքների պաշտպանության՝ տրամադրելով անվճար իրավաբանական, հոգեբանական և սոցիալական աջակցություն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ.

- նպաստել քաղաքացիների իրազեկվածության և իրավական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,
- պաշտպանել մարդու իրավունքները և ժողովրդավարական արժեքները,
- խթանել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների թափանցիկությունը,
- իրականացնել ընտրական գործընթացի մոնիտորինգներ:

ՀԿ-ն գործում է ի նպաստ տեղական ինքնակառավարման բարեփոխման, առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի հանրային վերահսկողության, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց պաշտպանության համար:

ՄԵՆՔ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՄԲ՝ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ:

ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ.

- մասնակցություն ՏԻՄ գործընթացին, ավագանու նիստերին,
- նոր մասնագիտության-հմտության, աշխատանքային գործիքների տրամադրում 18 և բարձր տարիքային խոցելի խմբերի համար,
- անգլերեն-ռուսերեն լեզուների ակումբներ 6-17 տարիքային խմբերի համար,
- դասընթաց-վերապատրաստումներ,
- կամավորական աշխատանք,
- ակտիվ ժամանցի կազմակերպման հնարավորություն՝ «Նուկ» սրճարան-թեյարանում՝ ֆիլմի դիտում-քննարկումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, բանավեճի ակումբներ:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

YOUTH AVANGARD

armavircenter.cyc@gmail.com | +374 98 55 44 06

CIVIL YOUTH CENTER

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ-ն հանդես է եկել երիտասարդներին ուղղված մի շարք նախաձեռնություններով, իրականացրել ծրագրեր, որոնցից են.

- Իջևանի համար երիտասարդական քաղաքականության մշակում՝ խմբերի ակտիվ ներգրավմամբ,
- հատուկ ուսուցումներ՝ մեդիագրագիտության, տեղական ժողովրդավարության և ՏԻՄ օրենսդրության վերաբերյալ,
- ներգրավում հանրային միջոցների նկատմամբ մոնիտորինգային աշխատանքներին:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ-ի առաքելությունն է խթանել լավ կառավարումն ու քաղաքացիական մասնակցությունը՝ հանուն Հայաստանում ժողովրդավարական գործընթացների ամրապնդման և օրենքի գերակայության:

ԿԵՆՏՐՈՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

1. Կենտրոնը ձգտում է նպաստել հանրային կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ քաղաքականությունների իրավակիրառ պրակտիկաների բարելավման, հանրային մասնակցության խթանման և հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդման միջոցով:

2. Կենտրոնը ձգտում է ձևավորել իրավագիտակից քաղաքացիական հասարակություն՝ իրազեկվածության բարձրացման, քաղաքացիական ակտիվության ու առաջնորդության խթանման, հանրային ներգրավվածության հարթակների կայացման միջոցով:

3. Կենտրոնը ձգտում է խթանել համայնքների ինքնավարությունն ու սեփական զարգացումն առաջնորդելու կարողությունների ավելացումը՝ համայնքային դերակատարների հզորացման միջոցով:

ijevancenter@gmail.com
+374 43 94 39 02

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

«Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ-ն այսօր միավորում է ավելի քան 100 երիտասարդական մասնագիտական և տարածքային ակումբներ, կենտրոններ ու կազմակերպություններ՝ դառնալով Հայաստանի ամենամեծ երիտասարդական կառույցը:

ԵԱԴ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է.

Միավորելով երիտասարդական ակումբներին՝ բարձրացնել երիտասարդ սերնդի դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում:

Կազմակերպության գործունեության սկզբունքներն են ակտիվ ժողովրդավարությունը, օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

Երիտասարդներին հնարավորություն է տրվում մասնակցել տարաբնույթ թեմաներով և նպատակներով կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է ԵՌԱԹԵՎ ԵՌԱՆԿՅՈՒՆԻՆ՝ ԵՌԱԿԸ, ՈՐԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒՄ Է ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՄ:

ԾՐԱԳՐԵՐ.

ԵԱԴ-ն տեղական, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ, որոնց շրջանակներում երիտասարդները հնարավորություն են ունենում ծանոթանալու երիտասարդական աշխատանքի, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունների, տեղական ու միջազգային երիտասարդական ծրագրերի, ուսման և փորձառության ձեռքբերման հնարավորությունների մասին:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

FEDERATION OF YOUTH CLUBS OF ARMENIA

office@fyca.net

+374 10 58 87 68

ՋԵՐՄՈՒԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ջերմուկի երիտասարդական կենտրոնը Ջերմուկ համայնքի «Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի երիտասարդական կառույցն է: Կենտրոնը հարթակ է, որտեղ երիտասարդները կարողանում են ինքնաարտահայտվել և իրագործել բազմաթիվ գաղափարներ, ծրագրեր, ինչպես նաև փորձի փոխանակում իրականացնել:

Ներկայում կենտրոնն ունի շուրջ 135 անդամ, ովքեր զբաղվում են ինքնազարգացմամբ և ուժեղ համայնք ձևավորելու քայլեր են անում:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ Է՝ «ԶԱՐԳԱՆԱՆՔ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵՆՔ ՄԻԱՍԻՆ»:

Ջերմուկի երիտասարդական կենտրոնի նպատակն է նպաստել Ջերմուկում երիտասարդների հզորացմանը՝ տրամադրելով ոչ ֆորմալ կրթություն, ապահովելով այլ մարզերի երիտասարդների հետ ամուր կապը, ստեղծելով համագործակցություն հիմնված պետությունը զարգացնելու գաղափարի վրա:

Կենտրոնի գործունեությունը միտված է ապահովելու երիտասարդների արդյունավետ ժամանցը, բարձրացնելու նախաձեռնողականությունը, ակտիվությունը և խթանելու համայնքի կառավարմանը նրանց մասնակցությունը:

Թիրախային խումբը Ջերմուկ համայնքի 14-30 տարեկան պատանիներն ու երիտասարդներն են:

Կենտրոնի ակտիվ գործունեության արդյունքում համայնքում կազմակերպվել են նաև համայնքային տարբեր միջոցառումներ, որոնց մասնակցել են ոչ միայն երիտասարդները, այլ նաև քաղաքի բնակիչներն ու այցելուները:

Ջերմուկի երիտասարդական կենտրոնում հավատում են, որ այսօրվա երիտասարդների կրթությունից է կախված մեր երկրի բարգավաճումը:

jermukyouth@gmail.com
+374 77 38 85 48

ՄԱՐԶԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ

«Մարզերի երեխաները մարզերում» ՀԿ, տարածված հապավումը՝ ՄԵՄ, սոցիալ-կրթական հասարակական կազմակերպություն է, որի շնորհիվ մարզերի երեխաները, այցերի միջոցով, ծանոթանում են Հայաստանին, շփվում և ընկերանում իրենց հասակակիցների հետ: ՄԵՄ-ը նաև մարզեցիների համար ստեղծում է բազմոլորտ գիտելիքների ստացման և դրանց միջոցով աշխատանքի ընդունման հնարավարություններ:

ՄԵՄ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

- մարզերում բնակվող երեխաներին տալ հնարավորություն բացահայտելու իրենց հայրենիքը,
- մարզերում բնակվող երեխաների միջև ստեղծել ընկերական ցանց, նպաստելով ապագա գործընկերային կապերի ձևավորմանն ու առաջխաղացմանը,
- նպաստել երեխաների աշխարհայացքի ընդլայմանն ու կրթամակարդակի բարձրացմանը էքսկուրսիաների, ոչ ֆորմալ կրթական և այլ գործիքների միջոցով,
- զարգացնել պետական մտածողությունը մարզաբնակ երեխաների մոտ,
- նպաստել մարզաբնակ երեխաների հմտությունների զարգացմանն ու ապահովել նրանց աշխատանքով,
- օգտագործել Սփյուռքի ներուժն ու ամրապնդել կապերը, իրականացնել համատեղ միջոցառումներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ ՉԷ ՇՏԱՊԵԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, ԱՅԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ԿԱՌՈՒՑԻՐ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ԴՈՒ ԵՍ:

ՄԵՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.

Որպես համահայկական երիտասարդական և պատանեկան ցանցային համայնք պատանիների և երիտասարդների համընդհանուր հմտությունների զարգացմամբ և ՄԵՄ արժեքների ձևավորմամբ կերտել առաջադեմ, կիրթ և հայրենատեր հայ հասարակություն:

Կազմակերպությունն իր ծրագրերով փորձում է նպաստել Հայաստանի զարգացման ապակենտրոնացմանը՝ մարզաբնակ երեխաների շփման ակտիվացման և կարողությունների բացահայտման միջոցով:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

CHILDREN IN REGIONS

regionchildren@gmail.com

+374 41 51 15 17

ՄԵՆՔ

«Մենք» Լոռու մարզի ՀԿ առաքելությունը Հայաստանում այնպիսի հասարակության ստեղծումն է, որտեղ երիտասարդները հավասար հնարավորություններ կունենան՝ լիովին իրացնելու բոլոր իրենց իրավունքները:

Կենտրոնի կողմից ներկայում իրականացվում է «Միասին հանուն տեղական ժողովրդավարության» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել գյուղական համայնքների երիտասարդներին՝ գիտակցելու տեղական մակարդակում բովանդակալից մասնակցության կարևորությունը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ԴԵՌ ՇԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՆ ՄԵԶ ՀԵՏ ԺՊՏԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ:

«ՄԵՆՔ» ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-Ն ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ.

- նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը, զարգացմանն ու կայացմանը,
- իրականացնել սոցիալական ծրագրեր՝ ցուցաբերելով նյութական, բարոյական և հոգեբանական աջակցություն կարիքավոր և խոցելի այլ խմբերին,
- նպաստել ազգային-հայրենասիրական ոգու բարձրացմանը երիտասարդների շրջանում,
- նպաստել հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին, գիտական ու կրթական մակարդակի զարգացմանը,
- իրականացնել բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանությանը միտված ծրագեր և միջոցառումներ,
- կազմակերպել և իրականացնել, երիտասարդական, կրթական, մշակութային, փոխանակման, սպորտային, ժամանցային, ինտելեկտուալ ծրագրեր և միջոցառումներ,
- նպաստել երիտասարդության շրջանում պատմամշակութային արժեքների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը,
- իրականացնել կանխարգելիչ և տեղեկատվական միջոցառումներ՝ ի նպաստ առողջապահական խնդիրների լուծման:

we.youth.ngo@gmail.com
+374 77 11 72 40

ՄԻԱՎՈՐՈՂ ԿԱՄՈՒՐՋ

«Միավորող կամուրջ» սոցիալական հասարակական կազմակերպության առաքելությունն է նպաստել մարզաբնակ երիտասարդների համար հնարավորությունների ստեղծմանն ու տարածմանը՝ ի նպաստ համայնքային զարգացման:

Առաջնային նպատակներն են քաղաքացիների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ոչ ֆորմալ կրթական միջոցառումները, երիտասարդական աշխատանքի խրախուսումն ու իրականացումը:

Կազմակերպության գործունեության հիմքում ընկած են հավասարության, փոխադարձ հարգանքի, երիտասարդակենտրոնության, գյուղական համայնքների համաչափ զարգացման արժեքները:

«Միավորող կամուրջը» Արագածոտնի մարզում միակ ՀԿ-ն է, որն ունի ԵՀԿ հավատարմագիր կամավորներ ուղարկելու և հյուրընկալելու համար, իրականացնում է Erasmus+ միջազգային փոխանակման ծրագրեր:

ԵՐԲ ԿՅԱՆՔՆ ՕՆԼԱՅՆ ԷՐ ԴԱՐՁԵԼ, ՄԵՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԷԻՆՔ ՏԱՐԱԾՈՒՄ:

«ՄԻԱՎՈՐՈՂ ԿԱՄՈՒՐՋ» ՍՀԿ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- երիտասարդական աշխատանքի խրախուսումը ոչ ֆորմալ կրթության միջոցով,
- մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացումը բնապահպանության, մշակույթի, մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտներում,
- որոշումների կայացման գործընթացներում երիտասարդության մասնակցության աճի բարձրացումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցության միջոցով:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

UNITING BRIDGE

unitingbridgengo@gmail.com | +374 77 56 80 08

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպությունը հիմնվել է 2008 թվականին Գյումրիում՝ գործունեության հիմքում ունենալով երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացման և համայնքի զարգացման գաղափարը:

Ամեն տարի ավելի քան 200 երիտասարդ սովորում է ինչպես մասնակցել տեղական որոշումների կայացման գործընթացներին, ստանում է կամավորական կարևոր հնարավորություններ, ներգրավվում է արդյունավետ աշխատանքային հմտություններ տվող ծրագրերում:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Երիտասարդները կարող են մասնակցել լեզուների ակումբների, աշխատարանների, փոխանակման ծրագրերի, ճամբարների, դասընթացների, պրակտիկայի հնարավորությունների, շահերի պաշտպանության արշավների և այլն:

ԵՆԿ ՀԿ-ն ունի բաց երիտասարդական կենտրոններ. «Գյումրու երիտասարդների տունը» բացվել է 2018 թ.-ին՝ Եվրոպական միության և Գյումրու համայնքապետարանի հետ համագործակցությամբ, իսկ «Սպիտակի երիտասարդների տունը»՝ 2020 թ.-ին՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Սպիտակի համայնքապետարանի հետ համագործակցությամբ: «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը ստեղծվել և կահավորվել է 2022թ.-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ Ճապոնիայի կառավարության և Արմավիրի համայնքապետարանի աջակցությամբ:

Բաց երիտասարդական կենտրոնների նպատակն է բարձրացնել Հայաստանում 13-18 տարեկան երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

yic@yic.am

+374 95 91 91 97

GYUMRI YOUTH INITIATIVE CENTRE

ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2014 թվականին:

Բոլոր հիմնադիր անդամները հաշմանդամություն ունեցող անձինք են, ովքեր միավորվել են ընդհանուր նպատակի շուրջ՝ հանուն հաշմանդամություն ունեցող անձանց շահերի և իրավունքների պաշտպանության:

ՀԿ առաքելությունն է նպաստել Լոռու մարզում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների լիակատար իրացմանը և նրանց լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին:

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն հիմնել է «EREO» անկախ կյանքի ռեսուրս կենտրոնը: Ռեսուրս կենտրոնի առաքելությունն է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը և ընդլայնել նրանց՝ հավասար և լիարժեք մասնակցությունը կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ որոշումների կայացման գործընթացներում:

ՄԵՆՔ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՁԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ, ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ.

- հաշմանդամություն ունեցող անձանց կրթական, աշխատանքային իրավունքներին և զբաղվածության հիմնահարցերին,
- հանրային վայրերի մատչելիությանը,
- ներառական/ադապտիվ սպորտի զարգացմանը Լոռու մարզում,
- հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությանը, առաջնորդությանը, նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքին:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ereo.hihhngo@gmail.com
+374 77 07 75 62

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

«Աշխատանք և հայրենիք» ՀԿ առաքելությունը Վայոց ձորի զարգացումն է: Կազմակերպության գործունեությունն ուղղված է համայնքների զարգացմանը, երիտասարդության և կանանց հզորացմանը և քաղաքացիական հասարակության կայացմանը:

Կազմակերպության կարևոր նպատակներից է զարգացնել երիտասարդների կարողությունները վերապատրաստման, ուսումնական շրջագայությունների, փոխանակման այցերի, երիտասարդական ճամբարների և ներգրավված քարոզարշավների միջոցով:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆՔ ԲԱԶՄԱԹԻՎ ԾՐԱԳՐԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԶՈՐԱՑՄԱՆ, ՓՄՁ-ՆԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ:

«ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ԵՆ.

- «Վայքի ինֆոտունը» տեղեկատվական կենտրոն և հարթակ երիտասարդների զարգացման համար,
- Երիտասարդական կինոթատրոնը,
- Վայքի երիտասարդական ակումբը:

Կազմակերպությունը բազմիցս համագործակցել է Youth in Action/Erasmus+ ծրագրի հետ՝ որպես տեղական հյուրընկալող Վայք քաղաքում:

«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ին կից հիմնադրվել է Վայքի երիտասարդական ակումբը, որն առանցքային դեր ունի Վայք քաղաքում և Վայոց ձորի մարզում երիտասարդների ներգրավվածության, հզորացման և ակտիվացման գործում:

Վայքի ինֆոտան ստեղծումը կազմակերպությունում համարում են իրենց կարևոր հաջողություններից մեկը: Այն բացվել է «ՀԱՄԱՏԵՂ» ծրագրի շրջանակում, որի Վայքի գործընկերն է «Աշխատանք և Հայրենիք» ՀԿ-ն:

ՀԿ-ն ունի լավ կահավորված գրասենյակ Վայք քաղաքում, Ալավերդյան 15/1 հասցեում:

ghazaryan.ruzan@gmail.com | +374 93 34 85 56

WORK AND MOTHERLAND

ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության առաքելությունն է նպաստել մարզի պետական, հասարակական և բիզնես հատվածների համագործակցությանը՝ հանուն սոցիալ-տնտեսական առաջընթացի:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

- ժողովրդավարական կառավարման թափանցիկ և պատասխանատու համակարգի ամրապնդում և բարելավում,
- քաղաքացիական հասարակության զարգացում,
- սոցիալ-տնտեսական զարգացում:

Իրականացվող նախաձեռնություններում կենտրոնը մեծապես հենվում է երիտասարդների ներուժի վրա՝ նրանց հետ ուղիղ աշխատանքը դիտարկելով որպես առաջնային կարևորության ուղղություն:

Գործընկեր կազմակերպությունները բարձր են գնահատում կենտրոնի հետ համագործակցությունը՝ նշելով, որ ՀՀ ցանկացած վայրում բարդ ծրագիր իրականացնելիս ԱԶԿ-ն անգնահատելի աջակից կարող է լինել:

«ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԼԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՑ Է, ՈՐՈՆՑ ՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԱՏ ԵՆ ՊԵՏՔ»:

ՄԱՐԻ ՅՈՎԱՆՈՎԻՉ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ (2008-2011 ԹԹ.)



«ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԲԱԶՄԱՊԻՍԻ ԵՆ.

- երիտասարդ կամավորների մենթորինգ,
- ուսանողների համալսարանական պրակտիկաների կազմակերպում,
- Erasmus+ շարժունության ծրագրեր,
- «Երիտասարդների ձայնը». Արմավիրը՝ որպես քաղաքացիական ներգրավվածության համար նպաստավոր համայնք,
- անվճար համակարգչային դասընթացներ Արմավիրի մարզի 13-18 տարեկան պատանիների համար և այլն:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ARMAVIR DEVELOPMENT CENTER
armavirnaira@gmail.com
+374 94 50 20 39

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒ ԾՐԱԳՐԵՐՈՎ.

- կարողությունների զարգացման դասընթացներ՝ ավելի քան 20 թեմաներով,
- «ԼԱՄՓ» հանրային խոսքի հարթակ, որի նպատակը հանրային խոսքի հմտությունների զարգացումն է,
- սեղանի ինտելեկտուալ խաղեր «Գիտամարտ» և «Գիտակուս», որոնց նպատակը երիտասարդների գիտելիքների մակարդակի բարձրացումն է տարբեր բնագավառներում:

ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆՔ ԲԱԶՄԱԹԻՎ ԾՐԱԳՐԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԶՈՐԱՑՄԱՆ, ՓՄՁ-ՆԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ:

«Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի առաքելությունը երիտասարդության՝ նորարար մոտեցումներով զարգացումն է, համախմբումը և հանուն հասարակության առաջընթացի միջավայրը փոխելը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- նպաստել ՀՀ-ում երիտասարդության ներուժի հզորացմանը՝ զարգացնելով երեխաների և երիտասարդների կարողություններն ու հմտությունները,
- խթանել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրերի զարգացումը՝ աջակցելով կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացներին,
- աջակցել էկոլոգիական մտածողության ձևավորմանը և կայացմանը՝ շեշտադրելով աշխատանքը հանրակրթական դպրոցների, երեխաների և երիտասարդների հետ,
- նպաստել հիմնադրամի կամավորների և երիտասարդների տեղական ու միջազգային համագործակցության զարգացմանը՝ շեշտադրելով միջազգային ցանցերում և հարթակներում երիտասարդների ներգրավվածությունը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

foundationyfd@gmail.com
+374 94 80 25 02

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպության գործունեությունը միտված է գործարար միջավայրի խելամիտ զարգացման և կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման միջոցով բնական միջավայրի պահպանմանն ու մարդկանց սոցիալական վիճակի բարելավմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՇԱՐՔ ԿՐԹԱԿԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ Է ՀԱՆԴԵՍ ԵԿԵԼ.

- շրջակա միջավայրի խնդիրներ (մասնավորապես Սևանա լճի և Գեղարքունիքի մարզի),
- գրաֆիկ դիզայն,
- կար ու ձև,
- աղբի վերամշակում,
- օրգանական/խելացի գյուղատնտեսություն,
- կարողությունների զարգացում (օրենսդրություն, մարդու բնապահպանական իրավունքներ),
- կանաչ տնտեսվարման գաղափարի տարածում,
- շրջանաձև տնտեսության գործելաոճի տարածում,
- էկոզբոսաշրջություն:

ՆԵՐԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ.

- «STRIVE. ԶԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» ծրագրի շրջանակում գործողությունների համալիր Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիք, Վայոց Ձորի, Տավուշի մարզի և Երևանի համար,
- «Մասնակցային բյուջե» ծրագիրը, որն իրականացվում է Գավառ և Մարտունի խոշորացված համայքներում:

ԲԼԵՋԱՆԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

info@blejanngo.org
+374 77 76 46 11

ՎԻՆՆԵԹ ԳՈՐԻՍ

«ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամը նպաստում է Հայաստանում կանանց հզորացմանը փոխկապակցված, նպատակային գործողությունների ու ծրագրերի միջոցով հետևյալ երեք հիմնասյուների շուրջ՝

- կանանց քաղաքական ներգրավվածություն,
- տնտեսական հզորացում,
- սոցիալական ակտիվություն ու աջակցություն:

Կազմակերպությունը, համագործակցելով գործընկեր կազմակերպության հետ, յուրաքանչյուր տարի խումբ է գործուղում Ֆրանսիա՝ մասնակցելու միջազգային ամառային ճամբարի:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՋԱԿՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ՝ ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- աջակցել կանանց տնտեսական դերի և մրցունակության զարգացմանը ՀՀ մարզերում,
- հզորացնել կանանց և երիտասարդներին՝ նրանց բիզնես գաղափարներին և ծրագրերին միտված խորհրդատվության և ուսուցման միջոցով,
- խթանել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց և երիտասարդների մասնակցությունը բոլոր մակարդակներում և այլն:

Հիմնադրամը աշխատում է երիտասարդների հետ քաղաքացիական կրթության, առաջնորդության, կամավորության խթանման և կարիերայի առաջխաղացման ապահովման ուղղություններով: Այդ նպատակով կազմակերպությունն այս պահին հիմնում է երիտասարդական այլընտրանքային կրթական կենտրոն Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում: Կարևորելով երիտասարդների դերն ու մասնակցությունը կլիմայական ռիսկերի մեղմմանն ուղղված ջանքերում՝ ձեռնարկել է «Իրազեկ երիտասարդ, կանաչ համայնք» ծրագիրը, կրկին՝ Սյունիքի Գորիս համայնքում:

goriswomen@gmail.com
+374 77 06 0 699

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

ՏԺԴ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- բացահայտել նոր մտածելակերպով եռանդուն երիտասարդ կադրերի, տրամադրել նրանց տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերելի գիտելիքներ, նպաստել տեղական ինքնակառավարման ոլորտում դերակատարություն ստանձնելուն,
- տեղական ինքնակառավարման համակարգում գիտելիքների և հմտությունների տարածում, փորձագիտական հետազոտությունների իրականացում, համայնքային աջակցություն,
- աջակցել տեղական ժողովրդավարության ոլորտում նախաձեռնություններին:

Դպրոցի հիմնական նպատակն է պատրաստել ակտիվ և ժողովրդավար երիտասարդ մասնագետներ ՀՀ համայնքներում, ովքեր կունենան անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ տեղական ինքնակառավարման ոլորտում և հարակից գործառնական ոլորտներում: Դպրոցին մասնակից կարող են դառնալ հանրակրթական դպրոցի, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները, երիտասարդներ, ում տարիքը մեծ է 18-ից և փոքր է 35-ից:

ՄԵՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ԹԵ ԱՌԿԱ, ԹԵ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ:

«Տեղական ժողովրդավարության դպրոց» ՀԿ-ն առաջարկում է նոր գիտելիքներով, եռանդուն երիտասարդ կադրեր պատրաստելու համար նախատեսված շարունակական դասընթացների ու միջոցառումների շարք: Դպրոցը կրում է ոչ ստացիոնար բնույթ, այսինքն՝ այն իր դասընթացներն ու գործունեությունը կարող է իրականացնել Հայաստանի տարբեր համայնքներում, ընդ որում, միաժամանակ մի քանի վայրում:

Այդ դասընթացների միջոցով Հայաստանի համայնքներում, շարունակաբար պատրաստվում են կադրեր, որոնք ապագայում իրենց ուրույն դերակատարությունն են ունենալու համայնքներում ժողովրդավարության հաստատման և զարգացման գործում:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

SCHOOL OF LOCAL DEMOCRACY

info@sld.am

+374 11 53 13 97

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

ԿԱԶԱ

«ԿԱԶԱ» (ֆր.՝ «Կոմիտաս Շվեյցարիա – Հայաստան բարեգործական միություն») շվեյցարական մարդասիրական հիմնադրամը ծնունդ է առել 1997 թվականին Սիրվարդ Գազանճեանի ղեկավարած շվեյցարական Կոմիտաս երգչախմբի Հայաստանում ունեցած համերգներից հետո: Շվեյցարիայում այն գրանցված է իբրև միություն, իսկ Հայաստանում՝ որպես հիմնադրամ (2001): Հիմնադրամը գործունեության 25 տարիների ընթացքում ծրագրեր է իրականացրել 5 ոլորտում՝ մարդասիրական, կրթական, զբոսաշրջային, գյուղատնտեսական, շինարարական:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ԱԶԱԿՑԵԼ ԱՄԵՆԱԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՀԵՏԵՎԵԼՈՎ «ՍՈՎՈՐԵՑՆԵԼ՝ ԻՆՉՊԵՍ ՁՈՒԿ ՈՐՍԱԼ ՊԱՐԶԱՊԵՍ ՁՈՒԿ ՆՎԻՐԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ» ԿԱՐԳԱԽՈՍԻՆ:



Հիմնադրամը շեշտը դնում է կրթական և վերապատրաստման առկա և հեռավար ծրագրերի վրա, ոչ ֆորմալ մեթոդների միջոցով՝ նպաստելու քաղաքացիական հասարակության առաջխաղացմանը՝ աջակցելով ուսուցանողներին և ուսուցիչներին:

Մասնավորապես՝ հիմնադրամը մշակել է հեռավար դասընթաց իր էլեկտրոնային ուսուցման հարթակում Moodle ծրագրաշարի միջոցով և ստեղծել է ուսուցողական խաղեր:

Իր ստեղծման օրվանից հիմնադրամն իր ուժերը ներդնում է մարդակենտրոն զբոսաշրջության զարգացման ուղղությամբ՝ միտված Հայաստանի մշակութային և մարդկային հարստությունների բացահայտմանը: Հիմնադրամը պատրաստել է ավելի քան 300 զբոսավար:

Ներկայում «ԿԱԶԱ» ՀԿ-ն իրականացնում է սոցիալական ձեռներեցության ծրագիր, փախստական և տեղահանված երիտասարդների ինտեգրման ծրագիր և այլն:

kasaam@kasa.am

+374 10 58 40 32

KASA SWISS HUMANITARIAN FOUNDATION

ՄԵԾԱՄՈՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«Մեծամորի երիտասարդական խորհրդարան» հասարակական կազմակերպությունը հիմնել են Մեծամոր խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերում ապրող մի խումբ երիտասարդներ:

ՀԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- բարձրացնել երիտասարդական կյանքի որակը Մեծամոր համայնքում,
- ստեղծել երիտասարդ առաջնորդներից բաղկացած ակտիվ ու գործուն ցանց,
- դարձնել երիտասարդներին ավելի հայրենատեր, համայնքահեն ու նախաձեռնող:

Մեծամորի երիտասարդական խորհրդարանի առաքելությունն է՝ հզորացնել հարազատ համայնքն ու դաստիարակել հայրենատեր երիտասարդներ:

Գործունեության ոչ երկար ընթացքում՝ մարզային բնույթ ունեցող բազմահարյուրանոց միջոցառումներից մինչև կրթա-երիտասարդական ճամբարներ և Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու ճանապարհ, Մեծամորի երիտասարդական խորհրդարանի թիմը բազմաթիվ խնդիրներ է հաղթահարել:

ՀԿ-ն Մեծամորում արդեն ստեղծել է առաջին երիտասարդական կենտրոնը, որը նոր կրթական, մշակութային և ժամանցային ծրագրեր անելու լավ հնարավորություններ է բացել:

Նման ծրագրերով՝ կազմակերպության անդամները իրենց ներդրումն են ունենում համայնքի երիտասարդական կյանքի զարգացման մեջ:

Մեծամորի երիտասարդական խորհրդարանի անդամները համոզված են, որ համայնքում ապրող քաղաքացին պիտի զգա, որ ինքը Հայաստան-Հայրենիքի վաղվա օրը կերտողն է, վաղվա օրը շենացնողը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

METSAMOR YOUTH PARLIAMENT YOUTH INITIATIVE

youthparliament1.31@gmail.com | +374 95 86 35 85

ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպությունը ձևավորվել է մի խումբ երիտասարդների կողմից, ովքեր ներգրավված են եղել տարբեր հասարակական նախաձեռնություններում:

Կազմակերպության առաքելությունն է խթանել պատասխանատու, թափանցիկ կառավարումը Հայաստանում՝ ամրապնդելով ժողովրդավարական ինստիտուտները: Նպատակը՝ հանրային շահի պաշտպանությունն ու ՏԻՄ անկախության, հաշվետվողականության, արդյունավետության բարձրացումն է:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.

- տեղական ժողովրդավարություն,
- բնապահպանություն,
- երիտասարդություն:

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ գործունեությունը միտված է խթանելու մասնակցային կառավարումը՝ մոտիվացնելով քաղաքացիներին մասնակցել համայնքի կառավարման գործընթացին: Այս տեսանկյունից կազմակերպությունը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում Լոռու մարզի 11 համայնքներում բնակվող երիտասարդներին աջակցելուն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- դասընթացների շարք լոռեցի երիտասարդների համար,
- Լոռու մարզի համայնքների ռեսուրսների ու խնդիրների վերհանմանն ուղղված հարցումներ,
- Սպիտակ ու Փամբակ համայնքների տրանսպորտի կարիքի գնահատում, որի արդյունքները հաշվի առնելով՝ «Հանրային տրանսպորտն այսօր» քաղաքացիական նախաձեռնության կողմից իրականացված ստորագրահավաքի արդյունքում ավագանու օրակարգում ներառվեց հանրային տրանսպորտի հարցը:

info@demodirect.am
+374 77 34 37 45

DIRECT DEMOCRACY

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Գորիսի մամուլի ակումբի առաքելությունը տարբեր նախաձեռնությունների միջոցով համայնքային զարգացումն է, աջակցությունը ժողովրդավարության կայացմանը, մասնակցությունը մարդկանց կյանքի որակի ապահովման գործում: ԳՄԱ-ն իրականացնում է տարբեր հետազոտություններ, որոնց մեթոդաբանության մեջ որպես գործիք օգտագործում է նաև մեդիան: Կազմակերպում են քննարկումներ, բանավեճեր, կարողությունների զարգացման թրեյնինգներ, որոնք կարող են աջակցել համայնքային դերակատարներին՝ իրենց ոլորտում մարդկանց կյանքի որակի փոփոխություն ապահովելու համար:

Կազմակերպությունն աշխատում է մեդիագրագիտության խթանման, տեղեկատվության ազատության, տարածման, փաստերի ստուգման միջոցով տեղական և տարածաշրջանային առումով դրական փոփոխություններ ստեղծելու ուղղությամբ: Հետազոտությունների, մեդիա գործիքների միջոցով հավաքագրվում են լայնածավալ տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսանում իրականացվող նախաձեռնությունների համար և ազդեցություն են ունենում այդ ոլորտներում հանրային քաղաքականության փոփոխության, որոշումների կայացման վրա:

ՀԻՄՆԱԴՐԵԼ ԵՆՔ ՍՅՈՒՆԻՔ-ԻՆՖՈՏՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔՆՆԱԴԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ:

ԳՄԱ-ն առավել ակտիվ է երիտասարդների՝ համայնքային կյանքում ներգրավմանը, նրանց կարողությունների զարգացմանը, ՏԻՄ-երում մասնակցայնության, հրապարակայնության, շահերի բախման կանխարգելման, մասնակցային կառավարման ապահովմանը, հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, համայնքի զարգացմանը վերաբերող նախաձեռնություններում:

ԳՄԱ-ն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ ներկայում իրականացնում է «Տեղական ինքնակառավարում՝ հանուն Գորիս համայնքի զարգացման» ծրագիրը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

info@gorispressclub.am
+374 98 99 07 31

RESTART foundation

ՌԵՍՏԱՐՏ

«Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի գործունեությունը միտված է Հայաստանում դրական փոփոխություններ բերելուն՝ երիտասարդության հզորացում, ավելի լավ կրթական համակարգի համար պայքար և ժողովրդավարական արժեքների տարածում:

Այս պահին հիմնադրամի կողմից իրականացվում են մի շարք ոչ ֆորմալ կրթական և երիտասարդական ծրագրեր: Վերջին մեկ տարվա ընթացքում արդեն 3-րդ անգամ կազմակերպվում է NextGen առաջնորդության ակադեմիան:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Ակադեմիային արդեն իսկ մասնակցել է Հայաստանի բոլոր մարզերից և Արցախից շուրջ 90 երիտասարդ:

Հիմնադրամի գործունեության հենց սկզբից՝ գրեթե ամեն տարի, կազմակերպվում են «Ռեֆորում» ուսանողական աշխատարան-ճամբարները, որոնց մասնակցել են շուրջ 300 երիտասարդներ:

Ժողովրդավարության երիտասարդական ակումբի շրջանակներում կազմակերպվում են դասընթացներ, որտեղ հենց երիտասարդները ներկայացնում են ժողովրդավարության էությունը և դրա տարբեր ասպեկտները: Ակումբի դասընթացներին արդեն իսկ մասնակցել է 120 երիտասարդ:

Վերջին տարվա ընթացքում կազմակերպվել են երիտասարդների կարողունակությունների զարգացմանն ուղղված Build Your Network Gavar և Build Your Network Yeghegnadzor աշխատարանները, որոնց արդյունքում ձևավորվել են երիտասարդական խմբեր Հայաստանի երկու մարզերում: Ծրագրին մասնակցել է շուրջ 60 երիտասարդ:

restartfoundationedu@gmail.com | +374 77 25 05 45

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնի նպատակներն ուղղված են Հայաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական, քաղաքական և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

«Կոմպասս» ՀԿ-ն ունի համայնքային խնդիրների հասցեագրման երկարամյա փորձ, այդ թվում համայնքի բյուջեի վիզուալ կայքի ստեղծման, բջջային նորարար հավելվածի ստեղծման, քաղաքականությունների մասնակցային մշակման ուղղություններում:

«Կոմպասս» կենտրոնը հիմնադրել է Հայաստանում գործող 34 ՔՀԿ-ներից կազմված «ՀամաՁարԿ» համայնքների զարգացման և մասնակցային կառավարման կոալիցիան, որի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի համայնքների զարգացումն է՝ հետազոտությունների, փորձագիտական աջակցման եւ մասնակցային կառավարման գործիքների ներդրման միջոցով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 8 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԿՈՄՊԱՍՍ» ԿԵՆՏՐՈՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է 50-ԻՑ ԱՎԵԼ ԾՐԱԳՐԵՐ:

Իրականացված գրեթե բոլոր հետազոտական, մոնիթորինգային ու այլ բնույթի ծրագրերը պարունակում են իրազեկության, շահերի պաշտպանության բաղադրիչներ, որի իրականացման միջոցով թիմը ձեռք է բերել հանրության հետ արդյունավետ աշխատելու կարողություններ:

Ներկայում ՀԿ թիմն իրականացնում է «Հանրային մասնակցային ու արհեստավարժ գնահատում՝ հանուն համայնքի զարգացման» ծրագիրը, որը միտված է նպաստելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասնակցայնության և հաշվետվողականության բարձրացման հիմնախնդրի լուծմանը:

ՀԿ-Ն ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

compassgyumri@gmail.com
+374 93 97 29 93

ԽՈՍՆԵԿՆԵՐ

ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՅՈՒՐԱՆՈՑ

ԱՆԳԵԼԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սոցիալական աշխատող, դասընթացավար,
«Ընտանեկան խորհրդատվության կենտրոն» ՀԿ հիմնադիր նախագահ

Անգելինա Ալեքսանյանը 2018 թվականին հիմնադրել է Ընտանեկան խորհրդատվության կենտրոնը, որի երկու հիմնական աշխատանքային ուղղություններն են հայ ընտանիքի ամրապնդումը ու երիտասարդական աշխատանքի պրոֆեսիոնալիզացիան Հայաստանում:

Նա նաև Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական միավորման կենտրոնական գրասենյակի փոխտնօրենն է:

Անգելինան ԵՊՀ պատմության և սոցիոլոգիայի ֆակուլտետների շրջանավարտ է, հնագիտության և սոցիալական աշխատանքի մագիստրոս: Սովորել է նաև Կոնեկտիկուտի համալսարանի Սոցիալական աշխատանքի դպրոցում:

ՄԱՐԻ ՆԱՂԴԱԼՅԱՆ

Կլինիկական հոգեթերապևտ, ԵՊՀ դասախոս,
Հոգեբանական գիտությունների թեկնածու

Մարի Նաղդալյանը դասավանդում է ԵՊՀ-ում, աշխատում է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում՝ որպես կլինիկական հոգեթերապևտ:

Ակտիվորեն զբաղվել և զբաղվում է երիտասարդական աշխատանքով, իրականացրել է ծրագրեր UNDP-ի, UNICEF-ի հետ: Մասնակցել է բազմաթիվ Erasmus+ ծրագրերի:

Ծնվել է Գեղարքունիքի մարզի Գետիկ լեռնային գյուղակում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Սովորել է Երևանի պետական համալսարանում՝ հոգեբանություն մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածու է:

ԼԱՆԱ ԿԱՌԼՈՎԱ

Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգող

Լանա Կառլովան Հայաստանում «Էրազմուս+» ազգային գրասենյակի համակարգողն է: Նա ունի ավելի քան 20 տարվա աշխատանքային փորձ ԵՄ ծրագրերում, մասնավորապես՝ որպես Հայաստանում բարձրագույն կրթության և վերապատրաստման ոլորտում «Տեմպուս/Էրազմուս+» ազգային գրասենյակների համակարգող:

Լանա Կառլովան ստացել է մագիստրոսական կոչում՝ սովորելով Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» բաժնում:

Մագիստրոսական աստիճան է ստացել նաև Երևանի պետական համալսարանից՝ սովորելով «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնում:

ԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Լրագրող, հաղորդակցման և հանրային կապերի մասնագետ

Անի Եղիազարյանը կրթությամբ լրագրող է, հաղորդակցման, հանրային կապերի և մարքեթինգի մասնագետ:

Մեծապես հետաքրքրված է մեդիագրագիտությամբ, աշխատում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում՝ որպես մեդիագրագիտության ծրագրերի ղեկավար:

ԱԻԴԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Lighteen նախաձեռնության ստեղծագործական մասի պատասխանատու

Աիդա Խաչատրյանը Երևանի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ֆակուլտետի նորավարտ ուսանող է: Մաթեմատիկայի նկատմամբ անսպառ սերը Աիդային ստիպեց նաև սիրել ծրագրավորումը ու իր մասնագիտական կյանքի ուղին կապել հենց ծրագրավորման հետ: Աիդան դեռ համալսարանական տարիներից ուսումնասիրել է մի քանի ծրագրավորման ուղղություններ՝ վեբ ծրագրավորում, մեքենայական ուսուցում և այլն:

Ծրագրավորմանը տարբեր կողմերից ծանոթ լինելը Աիդային հնարավորություն է տալիս անցկացնել համապարփակ դասեր Lighteen նախաձեռնության շրջանակներում:

ՀԵՂԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Lighteen նախաձեռնության հիմնադիր

Հեղինե Նավասարդյանը Երևանի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ֆակուլտետի նորավարտ ուսանող է: Համալսարանական խնդիրները միշտ անհանգստացրել են Հեղինեին ու նոր սերնդին ծրագրավորման ոլորտին ծանոթացնելու նպատակով, Հեղինեն ստեղծել է Lighteen նախաձեռնությունը, որով օգնում է երեխաներին կողմնորոշվել ոլորտում:

Դեռ փոքրուց Հեղինեն զբաղվել է ակտիվ կամավորությամբ ամենատարբեր ոլորտներում, որտեղ ձեռք է բերել կազմակերպչական ու թիմի հետ աշխատելու հմտություններ, որոնք այժմ օգնում են Lighteen նախաձեռնության կայացմանը:

ՍԵՐՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դասախոս, հրապարակախոս

Սերոբ Խաչատրյանը 1996 թվականից դասավանդում է ԵՊՀ-ում: «Հայաստանի մանուկներ հիմնադրամի», «Դասավանդիր Հայաստան», «Իրական դպրոց հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Աշխատել է «Լրագիր (Մոլորակ)» թերթում որպես լրագրող, վերլուծաբան, եղել է «Կրթություն» թերթի գլխավոր խմբագիրը: 2008-2013թթ. Հայաստանի մանուկներ հիմնադրամում (COAF) կրթական ծրագրերի ղեկավար էր, ապա գործադիր տնօրենը:

Ծնվել է Գյումրիում: Սովորել է ԵՊՀ Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետում:

ՄՀԵՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Երաժիշտ/երգահան, թարգմանիչ, հեղինակ, հանրային հարաբերությունների/հաղորդակցության մասնագետ

Միեր Մանուկյանը «Լավ Էլի» վանաձորյան ռոք խմբի և «3 ՄԱՆՈՒԿ» տրիոյի համահիմնադիրներից է և հիմնական երգահանը: Թարգմանել է այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Ջ.Ռ.Ռ. Թոլքինը, Միխայել Էնդեն, Կարեն Սվասյանը և այլք:

Միերը հանրային հարաբերությունների և հաղորդակցության ոլորտում ունի 20 տարվա փորձ:

«Արձակ 2011» պատմվածքի մրցույթում նորարարության համար երկու հատուկ մրցանակ է ստացել «Գաբրիել» պատմվածքի համար: 2009թ. Տիգրան Հայրապետյանի անվան մրցանակակիր է՝ «Քաղաքական-վերլուծական երգերի շարքի» համար:
Ավարտել է Երևանի պետական համալսարանի Միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը:

ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ



«Ամերիկյան անկյուններ» ծրագրի պատասխանատու
Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն

Տաթևիկ Հովսեփյանն աշխատում է Հայաստանում Ամերիկյան դեսպանատան Հանրային դիվանագիտության բաժնում և հանդիսանում է մի շարք ծրագրերի, այդ թվում նաև «Ամերիկյան անկյուններ» ծրագրի պատասխանատուն, որոնք բաց են քաղաքացիների համար և իրականացնում են բազմաթիվ անվճար դասընթացներ ու ծրագրեր:

Տաթևիկը ԱՄՆ պետքարտուղարության կողմից հովանավորվող Ապագա առաջնորդների փոխանակման (FLEX) ծրագրի 2009թ. շրջանավարտ է: 2009-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում՝ ստանալով Լեզվաբանության և Հաղորդակցության բակալավրի, ինչպես նաև Միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճաններ:

ԻՆՆԱ ՂԱԲՈՒԼՅԱՆ

EducationUSA հայաստանյան գրասենյակի ղեկավար,
կրթական խորհրդատու

Ինանա Ղաբուլյանը Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների EducationUSA հայաստանյան գրասենյակի ղեկավարն է և կրթական խորհրդատու: Ունի ավելի քան 10 տարվա փորձ միջազգային կրթության ոլորտում: Նախքան EducationUSA-ին միանալը՝ Ինանա Ղաբուլյանը աշխատել է որպես օտարերկրյա կրթական փաստաթղթերի գնահատման մասնագետ՝ Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային կենտրոնում, որտեղ նա նաև ներգրավված է եղել չփաստաթղթավորված փախստականների որակավորումների ճանաչման գործում՝ օգտագործելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատված նոր մշակված մեթոդաբանությունը:

Որպես կրթական խորհրդատու՝ Ինանան բարձր է գնահատում մոտիվացված ուսանողների հետ աշխատանքը՝ օգնելով նրանց գտնել իրենց կրթական ուղին ԱՄՆ բարձրագույն կրթության անսահման հնարավորությունների մեջ:

ԱՆՆԱ ԼԱԼԱՅԱՆ

Մարքեթինգի մասնագետ

Աննա Լալայանը ավարտել է Միլանի «Մարանգոնի» նորաձևության համալսարանը Բիզնեսի կառավարում և հաղորդակցություն մասնագիտությամբ:

Աննան ստեղծել է մարկետինգի և գործարար հաղորդակցության սեփական բիզնեսը և համագործակցում է մի շարք առաջատար ընկերությունների ու ազդեցության գործակալների հետ: Նա մեծ դեր ունի Հայաստանում ինստագրամ-ռիլերի պոպուլյարիզացիայի հարցում, ռիլերը որպես մարկետինգային գործիք Հայաստան ներմուծելու և այդ շուկան ընդլայնելու հարցում:

ՍԵՅՐԱՆ ՍՈՂՈՅԱՆ

Հանրային կառավարման մասնագետ, մարքեթոլոգ

Սեյրանը միջնակարգ կրթություն է ստացել Մարտունիում, այնուհետև ընդունվել Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ՝ հանրային կառավարման բաժին: Այժմ սովորում է ավարտական կուրսում:

Մասնակցել է 44-օրյա պատերազմին որպես տանկային վաշտի ավագ նշանառու օպերատոր: Ստացել է վիրավորում, այժմ վերականգնողական փուլում է:

Սիրում է շատ մարզվել, հատկապես լողն է շատ սիրում ու շատ ժամանակ է դրանով զբաղվում:

ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է

Հույս ունենք, որ այն մի քանի ժամը, որ անցկացրեցիք Երիտասարդական էքսպո 2023-ում, հետաքրքրիր էին, ուսանելի և մտածելու տեղիք տվող:
Ուրախ կլինենք լսելու Ձեր կարծիքներն ու առաջարկները, որոնք կարող եք ներկայացնել Անի նախասրահում/մուտքի մոտ՝ «Ի՞նչ կասեք էքսպոյի մասին» հատվածում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Անվտանգության, արտակարգ իրավիճակների և առողջության հետ կապված խնդիրների դեպքում կարող եք զանգահարել.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 1-02, 010-546914 (ԹԵԺ ԳԻԾ)

ՀՀ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ 911, 112 (ԹԵԺ ԳԻԾ)

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ 1-03

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրն իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի գլխավորած կոնսորցիումը՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ-ի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի անդամակցությամբ: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրը կբարելավի Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու կընդլայնի դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Ծրագիրը հիմնված է երիտասարդների դրական զարգացման գաղափարախոսության վրա և նպաստում է քաղաքացիական կրթության և երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մեջ երիտասարդների դրական զարգացման գործիքակազմի ներդրմանը:

Ծրագիրն ունի երկու բաղադրիչ՝

- Դպրոցականների քաղաքացիական մասնակցության կարողունակությունների բարելավում, դերի բարձրացում, սեփական գործունակության նկատմամբ վստահության խթանում.
- Երիտասարդների համար քաղաքացիական ներգրավվածության նպաստավոր միջավայրի բարելավում:

ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԵՐՆ ԵՆ.

- քաղաքացիական կրթության լիարժեք ներդրում հանրակրթական համակարգում,
- ֆորմալ կրթության հագեցում արտադպրոցական գործունեությամբ և կամավորական աշխատանքներով, ինչպես նաև դրա կենսունակության համար ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում,
- երիտասարդներին որոշումների կայացման գործընթացներում հետևողականորեն ներգրավելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացում, ինչպես նաև նման հանձնառության մակարդակի բարձրացում համապատասխան պետական կառույցներում,
- երիտասարդների հետ աշխատելու և նրանց քաղաքացիական մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների և հանձնառության մակարդակի բարելավում քաղաքացիական հասարակության կազմակերպություններում,
- երիտասարդների ոչ-ֆորմալ քաղաքացիական կրթության գործուն ուղիների իրացում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երիտասարդների դրական զարգացումը (positive youth development/PYD) երիտասարդների հետ աշխատանքի փիլիսոփայական և գործնական մոտեցում է, որի վրա 21-րդ դարում խարսխվում է երիտասարդներին տրամադրվող աջակցությունը, որպեսզի նրանք չափահասության աշխարհ մուտք գործեն որպես առողջ, արարող և ներգրավված անհատներ:

Երիտասարդների դրական զարգացման հիմքում ընկած է հետևյալ գաղափարը. շատ ավելի հավանական է, որ այն երիտասարդները, ովքեր զարգացման համար անհրաժեշտ ավելի շատ ուժեղ կողմեր կամ այսպես կոչված «ակտիվներ» ունեն, իրենց հասունացման և չափահասությանն անցման ընթացքում ավելի հաջողությունների կհասնեն կրթության մեջ, կընդլայնվի նրանց տնտեսական գործունեության հորիզոնը, քաղաքացիական ներգրավվածության մակարդակը շատ ավելի բարձր կլինի, իսկ երկարաժամկետ առումով՝ նրանք ավելի առողջ կլինեն: Երիտասարդների դրական զարգացման մի շարք սահմանումներից «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրն ընտրել և հիմնվում է երիտասարդների դրական զարգացման ԱՄՆ ՄԶԳ սահմանման վրա, ըստ որի՝ «երիտասարդների դրական զարգացման մոտեցումը նպաստում է երիտասարդների արդյունավետ և կառուցողական ներգրավմանն իրենց ընտանիքներում, համայնքներում և/կամ կառավարություններում, որպեսզի երիտասարդները կարողանան առավելագույնս իրացնել իրենց ներուժը:

Երիտասարդների դրական զարգացման մոտեցումը հնարավորություն է տալիս երիտասարդներին ձեռք բերել հմտություններ, ձևավորել ուժեղ կողմեր և կարողություններ, ստեղծել և պահպանել առողջ հարաբերություններ, զարգացնել իրենց շրջապատող միջավայրը և համակարգեր վերափոխել»: Թեև այս սահմանումը վերաբերում է տարբեր տարիքի երիտասարդներին՝ 10-29 տարեկան, անհրաժեշտ է հիշել, որ տարբեր տարիքային խմբերի զարգացման փուլերը խիստ տարբերվում են, և այս խմբերի երիտասարդների սոցիալական, հուզական և իմացական հմտությունները շատ արագ են փոփոխվում:

Երիտասարդների դրական զարգացման մոտեցումը ներառում է **չորս փոխկապակցված տիրույթներ**, որոնք թույլ են տալիս գնահատել, թե որքանով առողջ, արարող և ներգրավված են երիտասարդները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉՈՐՍ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ.

- **Ներքին և արտաքին ռեսուրսներ (assets)**. երիտասարդներն ունեն անհրաժեշտ ռեսուրսներ, հմտություններ և կարողություններ՝ հասնելու իրենց համար ցանկալի արդյունքների:

- **Գործունեություն (agency)**. երիտասարդներն ըմբռնում են և ունեն կարողություն՝ օգտագործելու իրենց ուժեղ կողմերը և ձգտումները իրենց կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրանց վրա ազդելու, սեփական նպատակները սահմանելու, ինչպես նաև իրենց որոշումներն իրականացնելու համար, որպեսզի հասնեն իրենց համար ցանկալի արդյունքների:

- **Ներդրում (contribution)**. երիտասարդներին խրախուսում և ճանաչում են նրանց որպես կարևոր դերակատար, երիտասարդները ներգրավված են և/կամ առաջնորդում են տարբեր հարթակներում՝ այսպիսով հանդիսանալով սեփական, ինչպես նաև իրենց համայնքների դրական զարգացմանը միտված փոփոխությունների աղբյուր:

- **Զարգացմանը նպաստող միջավայր (enabling environment)**. այն միջավայրը, որտեղ ապրում և գործում են երիտասարդները, թույլ է տալիս զարգացնել և սատարել նրանց ուժեղ կողմերին, նպաստում է նրանց գործունեության դրսևորմանը, նրանց համար հասանելի է դարձնում ծառայությունները և հնարավորությունները: Այս միջավայրում զարգանում է վտանգներից խուսափելու և ապահով ու անվտանգ ապրելու նրանց կարողությունը, երիտասարդները պաշտպանված են և ապրում են առանց բռնության և պատժի սպառնալիքի: Այս միջավայրը խրախուսում է երիտասարդներին, ճանաչում նրանց որպես սոցիալական կարևոր դերակատար, միաժամանակ նպաստելով նրանց սոցիալական և հուզական կարողությունների զարգացմանը, որպեսզի նրանք ի զորու լինել բարգավաճելու:

  «Միջավայր» հասկացությունը բավականին լայն է և ներառում է մի քանի հարթություն՝ **սոցիալական** (օրինակ՝ երիտասարդների հարաբերությունները հասակակիցների և մեծահասակների հետ), **նորմատիվ** (օրինակ՝ վերաբերմունք, նորմեր և համոզմունքներ), **կառուցվածքային** (օրինակ՝ օրենքներ, ոլորտային քաղաքականություն, ծրագրեր, ծառայություններ և համակարգեր) և **ֆիզիկական** (օրինակ՝ ապահով, աջակցող տարածքներ):

Ստորև ներկայացված գծապատկերը համառոտ կերպով արտացոլում է չորս տիրույթների էությունը և դրանց փոխկապակցվածությունը:



«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

#armcivics4engage

«ԵՐԻՏԱՍԱՐԴ, ԱԿՏԻՎ, ԼՍԵԼԻ»